ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 դեկտեմբերի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

176
(2842)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ՏՂԱՆԵՐԸ ԿԱՔԱԿՑԵ՞Ն ԱՐԱԶ ՕԶԲԻԼԻՍԻՆ

Դեկտեմբերի 23-ին նախատեսված՝ ՀՖՖ նախագահի ընտրություններին առաջադրված են երկու թեկնածուներ՝ գործող նախագահ Արմեն Մելիքբեկյանը եւ հայտնի ֆուտբոլիստ, հոլանդական «Այաքս»-ի, Մոսկվայի «Սպարտակ»-ի ու ազգային թիմի նախկին խաղացող Արազ Օզբիլիսը, ում թեկնածությունն առաջարկել է գործող չեմպիոն ու գավաթակիր «Ուրարտու» ՖԱ-ն: ՀՖՖ մեր աղբյուրները փոխանցում են, որ ֆեդերացիայում մտավախություն ունեն, որ ազգային հավաքականի նախկին ու ներկա խաղացողները կարող են հայտարարություն տարածել, որով կաջակցեն Արազին ու կոչ կանեն ՀՖՖ նախագահ ընտրել ֆուտբոլից իսկապես հասկացող, իշխանությունների հետ չսերտաճած Օզբիլիսին: Մեր աղբյուրները պնդում են, որ տեքստն արդեն քննարկվում է, ու, որոշ բացառություններով (կան տղաներ, որոնք չեն ուզում հրապարակային հայտարարել՝ պատճառաբանելով, որ դեռ ուզում են խաղալ ու խնդիրներ չունենալ գործողների հետ), միացողները շատ են: Հետաքրքրական է, որ դեկտեմբերի 13-ին ասուլիս է հրավիրել նաեւ ՀՖՖ անդամ, առաջնության լիդեր «Փյունիկ»-ի սեփականատեր Արթուր Սողոմոնյանը ու, ըստ չճշտված տեղեկությունների, կարող է սենսացիոն բացահայտումներ անել: Սրան զուգահեռ ֆեդերացիայի աշխատակիցներն են խնդրում, որ որոշ ակումբներ Մելիքբեկյանին աջակցող հայտարարություն տարածեն, ինչը դեռեւս ամբողջությամբ չի ստացվում: Ակնհայտ է, որ իշխանությունների «դաբրո»-ն հերթական անգամ ստացած Մելիքբեկյանը ֆեդերացիայի նախագահ կընտրվի, մեղմ ասած, կասկածելի վարկանիշային վիճակում: Մեզ փոխանցում են, որ ՀՖՖ նախագահ են ընտրում այնպիսի ՀԿ-ներ, որոնց գործունեությունը, մեղմ ասած, ակտիվ ֆուտբոլային չէ, ու շատերի մասին չգիտեն նույնիսկ ֆուտբոլասերները, իսկ, ահա, հայտնիները կա՛մ դեմ են, կա՛մ իրենց թեկնածությունն ունեն, կա՛մ դեռ բանակցում են՝ խոստանալով, օրինակ, խաղադաշտ կառուցել կամ այլ կերպ վարձահատույց լինել քվեի դիմաց: Մեզ զանգահարած ֆուտբոլասերները պնդում են՝ քանի դեռ այս մարդիկ են իշխանությունների ընտրյալը, ֆուտբոլը հետընթաց է ապրելու, ու խայտառակ պարտություններ ենք կրելու: Անհասկանալի է, թե Մելիքբեկյանն ինչ ձեռքբերումներ է իբրեւ աշխատանքի արդյունք ներկայացնելու իր ընտրության օրը. թերեւս աշխատակիցների՝ ունեցվածք ձեռք բերելը:



«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հաջորդ շաբաթ՝ դեկտեմբերի 15-ին եւ 16-ին, Գյումրիում տեղի է ունենալու ՔՊ կուսակցության ամփոփիչ քաղաքական ժողովը՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները հայտնում են, որ ՔՊ-ականներն այդ երկու օրը անցկացնելու են Գյումրու շքեղ GRAND HOTEL GYUMRI by APRICOT հյուրանոցում, որը գտնվում է հենց քաղաքի կենտրոնում: Ինչպես մեզ հայտնեցին, ՔՊ-ականներն արդեն երկու օրով տեղեր ամրագրել են հյուրանոցում: Կուսակցության քաղաքական ժողովին մասնակցելու են վարչության անդամները, կառավարության անդամները՝ նախարարներ, փոխվարչապետներ, ԱԺ նախագահը, նրա տեղակալները, հանձնաժողովի նախագահները, տարածքային կազմակերպությունների ղեկավարներ եւ համայնքի ղեկավարներ, ինչպես նաեւ հրավիրյալ անձինք, որոնց կորոշի վարչությունը: Հավելենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ մարտին գրել էր՝ Գյումրու մեր աղբյուրները հայտնել են, որ Վահագն Մկրտչյանը վարչապետի տիկնոջ՝ Աննա Հակոբյանի մորաքրոջ թոռն է, որը փոխքաղաքապետ կարգվեց: Հիմա, ըստ տեղեկությունների, նպատակ ունեն քաղաքապետի պաշտոնում նշանակել:

«Որ Հայաստանում կանանց դերը շատ մեծ է եւ կարեւոր: Դրա վկայությունն է այն, որ երկու տարի առաջ հենց կանանց աննախադեպ քաղաքական ակտիվությունը դարձավ այն շրջադարձային կետը, որը թույլ տվեց Հայաստանում իրականացնել պատմական փոփոխություններ». իշխանության գալուց հետո ահա այսպիսի շեշտադրմամբ ու հռետորաբանությամբ էր ուղերձներ հղում Նիկոլ Փաշինյանը՝ պատկերավոր եւ գեղեցիկ բառերով փաթեթավորված ներկայացնելով իր իշխանության օրոք կանանց դերի բարձրացումը քաղաքական դաշտում: Իշխող մեծամասնությունը դրոշակ էր սարքել այն, որ իրենց իշխանության օրոք պետական ապարատում կին պաշտոնյաները շատ են՝ գլխավոր դատախազ, առողջապահության նախարար եւ այսպես շարունակ: Իսկ ինչպիսի՞ պատկեր է իրականում. կին պաշտոնյաների նկատմամբ այս իշխանությունների վերաբերմունքի մասին լավագույնս կարող ենք պատկերացում կազմել՝ ընդամենը հետեւելով նախորդող երկու օրերին ԱԺ-ում տիրող իրադարձություններին: Խորհրդարանը շուրջ երկու օր քննարկում էր Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների ընտրության հարցը: Պաշտոնում առաջադրված երկու թեկնածուներն էլ կին էին՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախկին նախագահ Հայկուհի Հարությունյանը եւ հանձնաժողովի վարչության պետ Նարինե Ավետիսյանը: Թե ինչպիսի արհամարհական, վիրավորական եւ հարձակողական վերաբերմունք էին ՔՊ-ականները ցուցաբերում կին թեկնածուների նկատմամբ, բոլորի աչքի առաջ էր: Իշխանականները, օգտվելով իրենց՝ մեծամասնություն լինելու առավելությունից, «հարձակվել էին» կին թեկնածուների վրա ու ակնհայտորեն փորձում էին հոգեբանական ճնշում գործադրել, նսեմացնել նրանց: Վերջում էլ, խիստ նվաստացուցիչ վերաբերմունք ցույց տալով, հրաժարվեցին անգամ նրանց քվեարկությանը մասնակցել: ArmLur.am-ը գրել էր, որ ԱԺ նիստերից դուրս էլ ՔՊ-ն արհամարհական վերաբերմունք է ցույց տվել կին թեկնածուների նկատմամբ ու անգամ նրանց սպասելու տեղ չի հատկացրել ԱԺ սենյակներում, ինչի պատճառով նրանք ստիպված են եղել ԱԺ միջանցքներում սպասել: Ահա, միայն այս ամենը փաստում է, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը միայն վերամբարձ ու ականջահաճո հայտարարություններ է սիրում անել, իսկ իրականում կանանց թիրախավորում են հենց ՔՊ-ականները:



ՀՀ արդարադատության նախարարությունն առաջարկում է ներդնել էլեկտրոնային դատավարության համակարգ: Այդ փոփոխությունների նախագիծը ներկայացված է Ազգային ժողով, եւ առաջարկվում է փոփոխություններ կատարել ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» սահմանադրական, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերում: Նշվում է, որ այդ համակարգի ներդրումը նպատակ ունի թեթեւացնելու դատարանների ծանրաբեռնվածությունը, նպաստելու էլեկտրոնային գործիքների կիրառմամբ գործերի առավել արագ քննությանը, դատարանների եւ դատավարության մասնակիցների ռեսուրսների խնայմանը, քաղաքացիական ու վարչական գործերի՝ ողջամիտ ժամկետում քննության ապահովմանը: Հիմնավորման մեջ նշվում է, որ նախագծի նպատակն է ստեղծել այնպիսի իրավիճակ, որ էլեկտրոնային համակարգի միջոցով պատշաճ կերպով եւ համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին համահունչ եղանակով կատարված ցանկացած գործողություն ունենա նույն դատավարական հետեւանքները, որը կունենար ավանդական եղանակով կատարված համանման գործողությունը:

ԶՐՈՒՅՑ

ՄԱՐԳԱՐԱՅԻ ԱՆՑԱԿԵՏՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Ազգային Ժողովի «Հայաստան» դաշինքի պատգամավոր Արթուր Խաչատրյանի հետ, որը ներկայացրել է հայ-ռուսական հարաբերությունների փուլային փոփոխության, վեկտորների շեղման, նաեւ Մարգարայի անցակետի բացման եւ նպատակների մասին:

-Ներկայիս իշխանությունները հայ-ռուսական հարաբերությունները կարծես ուզում են վերացնել վերջնականապես: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կարելի է սպասել այս ամենից, ի՞նչ հետեւանքներ այն կարող է ունենալ:

-Շատ ռիսկային քաղաքականություն են վարում այսօրվա իշխանությունները: Նման խառը ժամանակներում, երբ տիտաններն են կռվում, ճիշտ կլիներ փորձել Հայաստանի Հանրապետությունը անվտանգ պահել համաշխարհային բախումներից: Բայց այս իշխանությունները համաշխարհային բախումը՝ հավաքական Արեւմուտք եւ Ռուսաստան, բերեցին Հայաստան: Նրանք ռիսկային քաղաքականություն են վարում, չեն ներկայացնում, թե ինչ այլընտրանքներ ունեն: Ես այս իշխանություններին լսելիս հիշում եմ Փանջունու «Կորչի ծապլվարը, կեցցե գաղափարը» հայտնի խոսքը: Այսինքն՝ ունեն գաղափար, եւ հեչ կարեւոր չէ, որ Հայաստանը ինչ ռիսկերի, ինչ վտանգների առաջ կկանգնի, միայն թե կարողանան իրենց գաղափարն առաջ տանել:

-Ինչպե՞ս կբնութագրեք այս հարաբերությունների վատացման ֆոնին Մարգարայի անցակետի բացումը, երբ մենք ոչ ուղիղ ասում ենք, որ հարաբերությունների լավացում չենք ուզում Ռուսաստանի հետ եւ Արեւելք ու Արեւմուտք ենք խառնում իրար: Ինչո՞ւ բացեցինք անցակետն այն պարագայում, երբ մենք ո՛չ Ադրբեջանի եւ ո՛չ էլ Թուրքիայի հետ չենք բանակցել: Ի՞նչ նպատակի այն պետք է ծառայի:

-Հայաստանը երբեք անցակետ չի փակել: Այն փակել է Թուրքիան քաղաքական նպատակներով եւ սկսել հանդես գալ ճանապարհը բացելու նախադրյալներով: Առաջինը Արցախից հրաժարումն է, որն այս իշխանությունները կատարեցին: Ցեղասպանությունից հրաժարում, ազգային սիմվոլիկայից հրաժարում: Սա թուրքական նախապայմաններ են, որոնց դիմաց միգուցե Թուրքիան ճանապարհ կբացի, որովհետեւ վերջին տարիների փորձը ցուց է տալիս, որ ինչքան հլու-հնազանդ կատարում ես պահանջները, այդքան նոր պահանջներ են ծնվում: Դա՝ մեկ, եւ երկրորդը՝ Մարգարայի ճանապարհը ասֆալտապատելը դեռ չի նշանակում, որ ճանապարհը բացել են:

-Անցակետն են վերանորոգել:

-Անցակետը վերանորոգել են, հետո ի՞նչ: Թուքրիան ի՞նչ պահանջներ է դնելու ճանապարհը բացելու դեպքում: Բաց ճանապարհը եւ ճանապարհից օգտվելը տարբեր բաներ են: Հայաստանն առաջարկում է, որ 47 կիլոմետր կարող եք իմ ճանապարհով անցնել, 400 կիլոմետրն անցնելու է թուրքական ճանապարհով:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՑԱՎ

ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ամ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշակման հանձնաժողովի՝ աղօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը ֆեյսբուքյան իր էջում գրում է. «AAD (Հայաստան, Արցախ, Սփյուռք) 14-րդ ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ արժանացա «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» անվանակարգում պատվոգրի:

«Շնորհակալ եմ այս գնահատականի համար: Հայրենիքին ծառայելը, կարծում եմ, յուրաքանչյուր ծնված հայի առաքելությունն է: Դա չվերջացող գործընթաց է, չավարտվող աշխատանք, ու ես պատվով եմ կատարում իմ աշխատանքը, ես սիրում եմ իմ աշխատանքը:

Իհարկե, լինում են դեպքեր, իրավիճակներ, երբ խորը հիասթափությունն ուղղակի չի թողնում, որ դու շարունակես նայել ապագային, բայց մենք պարտվել ենք պատերազմի դաշտում. պարտությունը չպիտի լինի մեր հոգիներում, պարտությունը չպիտի ուղեկից լինի մեզ:

Մենք պիտի ապրենք ապագա հաղթանակների հույսով եւ ապագա հաղթանակների նպատակադրմամբ: Ես միայն այս մաղթանքն եմ ուզում այսօր հնչեցնել եւ բոլորիդ ցանկանալ ապագա հաղթանակներ, որպեսզի կարողանանք այն, ինչ կորցրել ենք, կամաց-կամաց, բլուր-բլուր հետ բերել, որովհետեւ երբեք որեւէ մեկը մեզ չի արգելում ունենալ հայրենիք:

Այս ժամանակավոր անարդարությունը, կարծում եմ, մենք կկարողանանք ազգովի հաղթահարել, եթե բոլորս լինենք միասնական, յուրաքանչյուրս կատարենք աշխատանքն այնպիսի սիրով, այնպիսի պատասխանատվությամբ եւ իսկապես այնպիսի հայրենասիրությամբ, որ անկեղծորեն հավատանք մեր աշխատանքի արդյունավետությանը:

Շնորհակալ եմ նաեւ Ձեզ, Մամիկոն ջան, այս երեկոն կազմակերպելու համար: Ուզում եմ, որ յուրաքանչյուր ստացած գնահատական լինի մոտիվացնող: Խոնարհումս եմ հայտնում զոհված զինծառայողների ծնողներին, ընտանիքներին, շուտափույթ ապաքինում եւ կյանքի շարունակականությունն ապահովելու հույսի արթնացում այն բոլոր զինվորներին, որոնք իրենց կեսը թողել են պատերազմի դաշտում:

Մենք չենք պարտվել ամբողջությամբ եւ վերջնականապես. սա ժամանակավոր է, մենք պիտի նայենք առաջ, եւ ապագա սերունդները պետք է մեզ համար ավելի նոր ու հզոր հայրենիք կերտեն: Ես հավատում եմ այդ ապագային: Շնորհակալ եմ...»»:

32 ՀԱՅ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐ ԱԶԱՏ ԵՆ ԱՐՁԱԿՎԵԼ

ՀՀ կառավարությունը հայտարարություն է տարածել: Այն ներկայացնում ենք ստորեւ. «Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահի վարչակազմի համատեղ հայտարարությունը. «Հայաստանի Հանրապետությունը եւ Ադրբեջանի Հանրապետությունը համակարծիք են, որ տարածաշրջանում վաղուց սպասված խաղաղության հասնելու պատմական հնարավորություն կա: Երկու պետությունները վերահաստատում են ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության սկզբունքների հարգման հիման վրա հարաբերությունները կարգավորելու եւ խաղաղության պայմանագրի կնքմանը հասնելու իրենց մտադրությունը: Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահի վարչակազմի միջեւ բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել երկու պետությունների միջեւ վստահության կառուցման ուղղությամբ շոշափելի քայլեր ձեռնարկելու մասին: Առաջնորդվելով մարդասիրության արժեքներով եւ, որպես բարի կամքի դրսեւորում, Ադրբեջանի Հանրապետությունն ազատ է արձակում 32 հայ զինծառայողների: Հայաստանի Հանրապետությունն իր հերթին, առաջնորդվելով մարդասիրության արժեքներով եւ, որպես բարի կամքի դրսեւորում, ազատ է արձակում 2 ադրբեջանցի զինծառայողների: Որպես բարի կամքի քայլ՝ Հայաստանի Հանրապետությունն իր աջակցությունն է հայտնում ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի մասնակիցների կոնֆերանսի 29-րդ նստաշրջանը («COP29») հյուրընկալելու նպատակով Ադրբեջանի Հանրապետության ներկայացրած հայտին եւ հանում է իր թեկնածությունը: Հայաստանի Հանրապետությունը եւ Ադրբեջանի Հանրապետությունը հույս են հայտնում, որ Արեւելյան Եվրոպայի խմբի մյուս պետությունները նույնպես կաջակցեն հյուրընկալելու նպատակով Ադրբեջանի Հանրապետության ներկայացրած հայտին: Որպես բարի կամքի քայլ՝ Ադրբեջանի Հանրապետությունն իր աջակցությունն է հայտնում Արեւելյան Եվրոպայի խմբի «COP»-ի բյուրոյին անդամակցելու համար առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության թեկնածությանը: Հայաստանի Հանրապետությունը եւ Ադրբեջանի Հանրապետությունը կշարունակեն իրենց քննարկումները վստահության կառուցման ավելի շատ միջոցառումների իրականացման վերաբերյալ՝ մոտ ապագայում կյանքի կոչելու համար, եւ կոչ են անում միջազգային հանրությանը՝աջակցելու իրենց ջանքերին, որոնք կնպաստեն երկու պետությունների միջեւ փոխադարձ վստահության կառուցմանը եւ դրական ազդեցություն կունենան Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանի համար»»:

ԻՆՉՈ՞Ւ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑԵԼ

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը պարզաբանել է, թե ինչու չի մասնակցելու Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի խորհրդի արտահերթ, ինչպես նաեւ վեհաժողովի լիագումար նիստին:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Սիմոնյանն ընդգծել է, որ այդ նիստերին մասնակցելու իմաստ չի տեսնում:

«Կան չլուծված հարցեր, մարդիկ իրենց պարտավորությունները չեն կատարում: Մենք լսում ենք, որ միայն Հայաստանի ուղղությամբ է հոխորտանք հնչում, այնինչ եթե մենք նայենք, օրինակ, 2020 թվականին նոյեմբերի 9-ից այս կողմ, ադրբեջանական կողմը՝ որպես Ռուսաստանի դաշնակից, բազմաթիվ անգամներ շատ-շատ վատ է դրսեւորել իրեն՝ սկսած ռուս զինվորներին սպանելուց, վերջացրած պայմանավորվածությունները խախտելուց: Այսինքն՝ Ադրբեջանն ինչ ուզել, մեր տարածաշրջանում արել է, եւ Ռուսաստանը կամ չի արձագանքել, կամ չի կարողացել դա անել»,-ասաց Սիմոնյանը:

ԱԺ նախագահը հիշեցրեց՝ռուսական կողմը մեծ աղմուկ էր բարձրացրել, երբ Հայաստանը հումանիտար օգնություն էր ուղարկել Ուկրաինա, այնինչ ադրբեջանական կողմը բազմաթիվ անգամ նման օգնություն է ուղարկել, բազմիցս Ուկրաինայի նախագահը շնորհակալություն է հայտնել Ադրբեջանի նախագահին:

«Բայց Ռուսաստանի «արդարացի» ԱԳՆ-ից ոչ մի ծպտուն մենք չլսեցինք: Խախտվել է նոյեմբերի 9-ի համաձայնագիրը, խախտվել են ներքին պայմանավորվածությունները, գերիների վերադարձի պայմանավորվածությունը եւ այլն, բայց Ռուսաստանը, ցավոք սրտի, Հայաստանի պարագայում շատ ցավոտ է արձագանքում, իսկ Ադրբեջանի պարագայում, իմ կարծիքով, կամ չի կարողանում, կամ ձեւ է անում, որ չի նկատել, որպեսզի դեմքը պահպանի վատ խաղի ժամանակ»,- ասաց Սիմոնյանը:

Հիշեցնենք, որ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը չի մասնակցել 2023 թվականի դեկտեմբերի 19-ին Մոսկվայում կայանալիք Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի խորհրդի արտագնա նիստին եւ 16-րդ լիագումար նիստին: Նիստերին չի մասնակցի նաեւ ՀՀ ԱԺ պատվիրակությունը: Ալեն Սիմոնյանն այդ մասին նամակով տեղեկացրել է Ռուսաստանի Դաշնային ժողովի պետական դումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինին:

ԴԱՏԱՎՃԻՌ

ՈՍԿԱՆՅԱՆԸ ԲԱՔՎՈՒՄ ԴԱՏԱՊԱՐՏՎԵՑ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Բաքվում հրապարակվել է ադրբեջանցիների կողմից գերեվարված պահեստազորային Գագիկ Ոսկանյանի դատավճիռը:

Ինչպես հայտնում են ադրբեջանական լրատվամիջոցները, նա դատապարտվել է 18 տարվա ազատազրկման:

Հիշեցնենք՝ ՀՀ ՊՆ-ն օգոստոսի 16-ին հայտնեց, որ պահեստազորային Գ. Ո.-ն, ըստ նախնական տվյալների, ինքնակամ թողել է մարտական դիրքը, նրան հայտնաբերելու նպատակով ընթանում են որոնողական աշխատանքներ:

Ավելի ուշ ադրբեջանական կողմը հայտարարեց, որ ձերբակալել են հայ զինծառայողի: Հակառակորդը հերթական ապատեղեկատվությունը տարածելու առիթը բաց չթողեց՝ նշելով, թե, իբր, դիվերսիոն ներթափանցման փորձ է եղել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը ներկայացրեց մի տեսանյութ, որում երեւում էր՝ ինչպես են Ադրբեջանի ԶՈՒ մի խումբ զինծառայողներ մոտենում դեռեւս չպարզված հանգամանքներում ադրբեջանական կողմում հայտնված պահեստազորային Գ. Ո.-ին, զրուցում նրա հետ, հետո ձերբակալում եւ մեքենայով տեղափոխում անհայտ ուղղությամբ:

Բաքուն նրան մի շարք հանցանքներ է վերագրում՝ ապօրինի սահմանահատումից մինչեւ ահաբեկչություն:

Ավելի վաղ նման ճակատագրի արժանացավ նաեւ Արցախի բնակիչ 68-ամյա Վագիֆ Խաչատրյանը: Խաչատրյանին Բաքվի դատարանը դատապարտեց 15 տարվա ազատազրկման: Տեղեկությունը հայտնեցին ադրբեջանական ԶԼՄ-ները:

Ազատազրկման առաջին 5 տարին Խաչատրյանը պետք է անցկացնի բանտում, իսկ մնացածը՝ խիստ ռեժիմի գաղութում:

Հիշեցնենք՝ անհետաձգելի բուժօգնություն ստանալու համար Արցախից Հայաստան տեղափոխվող Վագիֆ Խաչատրյանին Ադրբեջանի սահմանապահ ծառայության ներկայացուցիչները առեւանգեցին հուլիսի 29-ին: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ նրան մեղադրանք է ներկայացվել, ըստ որի՝ Վագիֆ Խաչատրյանը, իբր, հանցավոր խումբ է ստեղծել, որը 1991թ. դեկտեմբերի 21-ին մասնակցել է Խոջալուի շրջանի Մեշալի գյուղի բնակիչների դեմ հանցագործությունների:

Խաչատրյանը դատական նիստերի ընթացքում բազմիցս հայտարարել է, որ որեւէ հանցագործություն չի կատարել:

Ավելի ուշ Մարդու իրավունքների պաշտպանը անդրադարձել էր Վագիֆ Խաչատրյանի դեպքին:

«Լաչինի շրջանում ադրբեջանական զորքերի կողմից առեւանգված Վագիֆ Խաչատրյանը Բաքվում դատապարտվել է 15 տարվա ազատազրկման, առանց միջազգային իրավական չափանիշների եւ մարդու իրավունքների հետ կապված երաշխիքների պահպանման»,- X-ի իր միկրոբլոգում գրառում է կատարել ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԿԱՆԻ

Դեկտեմբերի 12-ին՝ ժամը 11:00-ին, կգումարվի Ազգային ժողովի արտահերթ նիստ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նիստի օրակարգում ընդգրկված է երեք հարց՝

1) «Հայաստանի Հանրապետության եւ ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամի միջեւ «Կանաչ, դիմակայուն եւ ներառական զարգացման ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը,

2) ««Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին», Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը,

3) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Հայաստանի կառավարության որոշմամբ՝ Արարատ Գրիգորյանն ազատվել է Վայոց ձորի մարզպետի պաշտոնից:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ կառավարության մեկ այլ որոշմամբ՝ Վայոց ձորի մարզպետ է նշանակվել Կոլյա Միքայելյանը:

Որոշումներն ընդունվել են ՀՀ կառավարության դեկտեմբերի 7-ի նիստում:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի դեկտեմբերի 6-ի որոշմամբ՝Նանե Ասատրյանը դեկտեմբերի 6-ից վերականգնվել է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի տեղակալի պաշտոնում:

«Հիմք ընդունելով Վերաքննիչ վարչական դատարանի թիվ ՎԴ/9814/05/21 վարչական գործով վճիռը եւ ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասով՝

Նանե Ասատրյանին 2023 թվականի դեկտեմբերի 6-ից վերականգնել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի տեղակալի պաշտոնում:

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին՝ հրապարակումից հետո անհապաղ սույն որոշման մասին պատշաճ կարգով իրազեկել Նանե Ասատրյանին»,- ասվում է որոշման մեջ:

ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Ադրբեջանում հայտարարվել են արտահերթ նախագահական ընտրություններ:

Ինչպես հաղորդում է ԱՊԱ-ն, նախագահ Իլհամ Ալիեւը ստորագրել է համապատասխան կարգադրություն:

ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին հանձնարարվել է ապահովել 2024 թվականի փետրվարի 7-ին ԱՀ նախագահի արտահերթ ընտրությունների անցկացումը՝ ԱՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:

ԽԱՌՆԱՇՓՈԹ

Ի՞ՆՉ Է ԹԱՔՑՆՈՒՄ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ներկայացնել ՀՀ քաղաքացու անձնագրերի «ողիսականը» եւ կենսաչափական անձնագրեր տրամադրելու բարեփոխման մշուշոտ աղագան:

Անձնագրային համակարգում տիրող քաոսը անգամ իշխանությանն ու ընդդիմությանն է միավորել, պատգամավորները, միմյանց հերթ չտալով, ելույթներ էին ունենում մոտ երկու շաբաթ առաջ՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» օրենքում եւ կից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրինագծերի փաթեթի քննարկման ժամանակ: Իհարկե, հին նմուշի անձնագրերի տրամադրման ժամկետը հերթական անգամ երկարացվեց մինչեւ կենսաչափական անձնագրերի նոր համակարգի ներդրումը, որն, ի դեպ, հայտնի չէ, թե երբ կլինի: Բանն այն է, որ 2017թ. ավարտվել է լեհական ընկերության հետ պայմանագրի ժամկետը, որը զբաղվում էր հայկական կենսաչափական անձնագրերի, ID-քարտերի արտադրությամբ եւ սպասարկմամբ:

Ներքին գործերի նախարարության միգրացիոն ծառայության ղեկավար Արմեն Ղազարյանը պնդում է, թե դրանից հետո սկսվել է նոր եւ ավելի ժամանակակից տեխնիկական պահանջների մշակումը: Ղազարյանը, մեղմ ասած, ճիշտ չի ասում, երբ հայտարարում է, թե տարիներ ի վեր անհրաժեշտ ներդրումներ չեն կատարվել անձնագրային համակարգի զարգացման վրա: Մեր ձեռքի տակ են հայտնվել փաստաթղթեր, որոնք վկայում են, որ պետությունը տարեկան մոտ 300 մլն դրամ է հատկացրել անձնագրային համակարգի համար, սակայն փաստացի ոչինչ չի արվել: Ավելին՝ լեհական ընկերության հեռանալուն պես եղել է պայմանավորվածություն կենսաչափական անձնագրերի եւ ID-քարտերի արտադրությունը եւ սպասարկումը Կառավարության կողմից ստեղծված «ԷԿԷՆԳ» ՓԲԸ-ով իրականացնելու համար, այդ նպատակով մեծ գումարներ են հատկացվել, սակայն նորից ոչինչ չի արվել: Առհասարակ, այս փաստաթղթերի ուսումնասիրությունից բավականին ուշագրավ մանրամասներ են ի հայտ գալիս, օրինակ՝թե ինչպես կարող է մի ծառայության համար ընկերությունը ամեն տարի ստանալ 128 մլն դրամ, սակայն հանկարծակի նույն ծառայության համար ստանալ 59 մլն, երբ ծառայությունը նույնն է. ստացվում է, որ կամ նախկինում գումարներ են մսխվել, կամ ընկերությունն այժմ որոշել է բարեգործությամբ զբաղվել: Մեկ այլ ուշագրավ տվյալ, թե ինչպես է տարիներ ի վեր անձնագրերի մրցույթում շահող հաջողակ գործարարը հեղափոխությունից հետո սառեցնում իր ընկերությունը եւ նորից հայտնվում խաղի մեջ այլ ընկերությամբ: Այս փաստաթղթերը, անշուշտ, կուղարկվեն թե՛ Դատախազություն, թե՛ ՊԿԾ, թե՛ մտահոգ պատգամավորներին, որոնք խորհրդարանում հայտարարում էին, թե պետք է պարզել՝ ինչու չենք կարողանում ՀՀ քաղաքացուն անձնագիր տալ, արդյոք կա այստեղ կոռուպցիոն ռիսկ, թե ոչ: Ի դեպ, համակարգի լավատեղյակ աղբյուրը բացարձակ հեքիաթ եւ վատ կառավարման արդյունք որակեց պնդումը, որ կենսաչափական անձնագրերի չիպերի պիտանելիության ժամկետն անցել է, այդ պատճառով առաջացել է այդ քաոսը:

«Նման արտադրություն իրականացնող ցանկացած ոք գիտի, որ չիպերը կոնկրետ տարիների կյանք ունեն, 10-20 տարի հետո դրանք անհրաժեշտ է փոխել զեղծարարություններից խուսափելու, ծրագրային թարմացումների համար: Այս տարրական ճշմարտությունը պետք է իմանային թե՛ լեհական ընկերությունը, թե՛ մեր ոստիկանության համապատասխան պաշտոնյաները եւ կոնկրետ քայլեր սկսեին նախքան չիպերի պիտանելիության ժամկետի ավարտը: Հիմա պետք է պարզել՝ արդյոք արտադրող ընկերությունը չիպերի պիտանելիության ժամկետի մասին զգուշացրել է ոստիկանության համապատասխան պաշտոնյաներին, թե ոչ. եթե չի զգուշացրել, պետք է պատասխանատվության ենթարկվի, եթե զգուշացրել է, ապա պետք է պատասխանատվության ենթարկվեն այն պաշտոնյաները, որոնք հանցավոր անգործություն, անփութություն են դրսեւորել»,- ասաց մեր աղբյուրը:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԾԱՆՐ ՎՆԱՍ՝ ՀԱՄԵՐԿՐԱՑՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ 2023թ. նոյեմբերի 26-ին՝ ժամը 21:17-ին, հաղորդում է ստացվել այն մասին, որ «ձախ գոտկային հատվածի կտրած-ծակած վերք» ախտորոշմամբ Հերացու անվան թիվ 1 համալսարանական բժշկական կենտրոն բուժօգնության է դիմել Հնդկաստանի Հանրապետության քաղաքացի:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 44-252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի եւ 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ եւ 8-րդ կետերի հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Իրականացված քննչական եւ վարութային գործողությունների, ինչպես նաեւ ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքում պարզվել է ենթադրյալ հանցագործությունը կատարած անձի ինքնությունը, որը եւս Հնդկաստանի Հանրապետության քաղաքացի է՝ծնված 2000թ.:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ քննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն՝ ՀՀ-ում կացության հիմքով գտնվող Հնդկաստանի Հանրապետության 23-ամյա քաղաքացին, իր 21-ամյա համաերկրացու հետ կենցաղային հարցի շուրջ ունենալով լարված փոխհարաբերություններ, 2023թ. նոյեմբերի 26-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, Երեւան քաղաքի Երվանդ Քոչար փողոցում գտնվող «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» եկեղեցու դիմաց վիճաբանել է վերջինիս եւ նրա ընկերոջ հետ: Վիճաբանության ընթացքում 23-ամյա երիտասարդը նախ ձեռքով հարվածել է 21-ամյա համերկրացու գլխին, որից հետո վերջինս ընկել է գետնին, այնուհետեւ գրպանից հանելով դանակը՝ նրա ընկերոջ առողջությանը ծանր վնաս պատճառելու դիտավորությամբ հարվածել է նրա ձախ գոտկային շրջանին՝ առողջությանը պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնաս:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Հնդկաստանի Հանրապետության 23-ամյա քաղաքացուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասով: Միջնորդություն է ներկայացվել դատարան՝նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԹԱՔՑՐԵԼ Է ՀԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԸ

«Ժողովուրդ» օրաթերթին ՀՀ քննչական կոմիտեից տեղեկացնում են, որ տնտեսական հանցագործությունների եւ մախանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթներով բացահայտվել են տնտեսվարող սուբյեկտի կողմից առանց հաշվարկային փաստաթղթերի տրամադրման աղրանքներ իրացնելու, շրջանառությունը թաքցնելու եւ առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու դեպքեր:

Մասնավորապես՝նախաքննության ընթացքում կատարված մեծածավալ վարութային գործողությունների, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության աշխատակիցների ձեռնարկած համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային տեղեկատվության եւ ռիսկերի վերլուծության վարչության աշխատակիցների իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Մ.Ե.-ն, հանդիսանալով 2008 թվականի հունվարի 8-ին պետական հաշվառում ստացած եւ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքում գործող խանութում պարենային եւ ոչ պարենային ապրանքների առեւտրով զբաղվող անհատ ձեռնարկատեր, ինչպես նաեւ 2019 թվականի սեպտեմբերի 23-ին պետական հաշվառում ստացած եւ նույն խանութում ոչ պարենային ապրանքների առեւտրով զբաղված Ա/Ձ Տ.Հ.-ի գործունեությունը փաստացի ղեկավարած անձ, առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու նպատակով, խախտելով ՀՀ հարկային օրենսգրքի հոդվածների պահանջները, 2019թ. հոկտեմբերից 2022թ. հոկտեմբեր ամիսների ընթացքում թաքցրել է հարկման օբյեկտը:

Մասնավորապես՝ վաճառքներ իրականացնելիս չի տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոններ, իսկ հարկային հաշվարկներում մտցրել է խեղաթյուրված տվյալներ, ինչպես նաեւ որպես Ա/Ձ Տ.Հ.-ի գործունեությունը փաստացի ղեկավարող անձ՝ 2019 թվականի հոկտեմբեր ամսից 2022 թվականի հուլիս ամիսների ընթացքում նույն եղանակով թաքցրել է նաեւ այդ անհատ ձեռնարկատիրոջ հարկման օբյեկտները, ինչի արդյունքում մեկ միասնական դիտավորությամբ պետական բյուջե չի վճարվել առանձնապես խոշոր չափերով հարկեր:

Հավելենք, որ քրեական վարույթով ձեռք բերված բավարար ապացույցների հիման վրա՝Մ.Ե.-ի նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ վերջինիս ներկայացվել է մեղադրանք:

Նախաքննության ընթացքում Մ.Ե.-ն հարկային մարմին է ներկայացրել ճշտված հարկային հաշվարկներ եւ նախկինում թաքցված հարկային պարտավորություններից պետական բյուջե է վճարել 200.000.000 ՀՀ դրամ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝դեկտեմբերի 6-ից 7-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 68 դեպք, որոնցից 5-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

60 ՏՈՒՆ՝ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ

Իջեւան համայնքի Լուսաձոր գյուղից հայտնեցին, որ այդտեղ Արցախից բռնագաղթած մեր հայրենակիցների համար 60 տուն կկառուցվի: Այդ փոքր գյուղը կառուցվելու է Ֆրանսիայի հայկական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամի կողմից: «Ժողովուրդ» օրաթերթը Լուսաձորից տեղեկացավ, որ մեկնարկել են այդ 60 տների համար հողատարածքի հատկացման, շինարարության համար նախագիծ-նախահաշիվ կազմելու աշխատանքները:

ՀԵՏՔԵՐԸ ԹԱՔՑՆՈ՞ՒՄ ԵՆ

««Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 3-րդ պահաբաժնի տարբեր հատվածներում բռնկված հրդեհի մեծ ու փոքր օջախների մեծ մասը հնարավոր է եղել մեկուսացնել: Հրդեհը բռնկվել է դեկտեմբերի 3-ին: Դիլիջան համայնքի բնակիչները հայտնում են, որ նույնիսկ ամռանը, երբ Դիլիջան քաղաքի եւ քաղաքին հարակից գյուղերի բնակիչներն անտառ են գնում սունկ եւ ուտելի խոտաբույսեր հավաքելու համար, նրանք անզգուշությամբ կարող են հրդեհ առաջացնել, այդքան մեծ չափերի հրդեհ չի լինում, իսկ հիմա՝ ձմռան սկզբին, երբ անտառ գնացողներ չեն լինում, անտառը խոնավ է, նման մեծ չափերի հրդեհը պատահական չի կարող լինել: Դիլիջանցիները կարծում են, որ հրդեհը սարքել են, որ ազգային պարկի տարածքում կատարած մեծ հատումների հետքերը ծածկեն, ամեն ինչ վերագրեն կրակին: Հրդեհաշիջման աշխատանքների մասնակիցներից մեկը «Ժողովուրդ» օրաթերթին ասաց, որ ինքն ապշած է հրդեհի գոտում տեսածից, թե այնտեղ ինչքան հատումներ են կատարվել:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՆ ՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանամերձ Տավուշի մարզի հանրակրթական 76 դպրոցներում աշխատում է ընդհանուր թվով 1830 ուսուցիչ եւ ուսուցչի օգնական: Տավուշի մարզպետարանից ստացված տվյալներով՝ նրանցից 1722-ն ունի բարձրագույն մանկավարժական կրթություն, 173-ը՝ բարձրագույն ոչ մանկավարժական կրթություն, 113-ը՝ միջին մասնագիտական կրթություն: Մարզի հանրակրթական դպրոցներում առկա է ուսուցչի թափուր 27 հաստիք՝ տարբեր առարկաների գծով: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկատվական հարցում է ուղարկել՝ նրան հարցնելով, թե միջին մասնագիտական կրթություն ունեցող քանի ուսուցիչ է ազատվել աշխատանքից: Մարզպետը պատասխանել է. «Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներից բարձրագույն կրթություն չունեցող 4 ուսուցիչ է ազատվել աշխատանքից»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԳՆԵՐ

Ի՞ՆՉ ԱՐԺԵ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԱՄԱՆՈՐ ՆՇԵԼԸ

Ամանորին հաշված օրեր են մնացել, դրսում արդեն իսկ տոնական եռուզեռ է. մարդիկ պատրաստվում են դիմավորել 2024 թվականը: Դիմավորելու ձեւերը տարբեր են. ոմանք նախընտրում են տանը ընտանիքի անդամների հետ նշել, ոմանք՝ հյուրանոցներում, ռեստորաններում, դե իսկ մի մասն էլ պարզապես նախընտրում է Նոր տարին երկրից դուրս անցկացնել՝ կտրվելով առօրյա հոգսերից:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմել է տուրիստական ընկերություններ՝ պարզելու, թե որքան գումար է անհրաժեշտ Ամանորը Եգիպտոսի Շարմ էլ Շեյխ քաղաքում անցկացնելու համար: Եվ այսպես, հայտնի տուրիստական ընկերություններից մեկը՝ Vardan travel-ը, Շարմ էլ Շեյխի հարմարավետ, ժամանցի կենտրոններին մոտ հյուրանոցում դեկտեմբերի 27-28-ից մինչեւ հունվարի 3-ը ներառյալ անցկացնելու համար մեկ անձին առաջարկում է 1200 դոլլարանոց փաթեթ: Փաթեթի մեջ ավիատոմսերն են, դիմավորում/ճանապարհումը, հյուրանոցում տոնական գալա համերգը: Ընկերությունից մեզ նաեւ փոխանցեցին, որ, կախված հյուրանոցից, կախված մնացած պայմաններից, արժեքը փոփոխական կարող է լինել, այսինքն՝ կան նաեւ ավելի մատչելի ու թանկ տարբերակներ:

Akhtamar tour տուրիստական ընկերության կայքում դեկտեմբերի 7-ի դրությամբ Շարմ էլ Շեյխ մեկնելու համար միայն դեկտեմբերի 23-ն է առաջարկվում, վերադարձի համար ամենավաղը հունվարի 3-ն է: 3-5 աստղ գնահատվող հյուրանոցների ցանկում տուրիստական ընկերությունը առաջարկում է 4 տարբերակ՝ CATARACT LAYALINA հյուրանոցում ստանդարտ սենյակներ՝ մի դեպքում՝ 1468 դոլարով, մյուս դեպքում՝ 1503, իսկ եթե ցանկանում ենք, որ պատուհանից ծովը երեւա, մի փոքր ավելի պետք է վճարեք: Այլ կերպ ասած՝ բարձրակարգ սենյակը՝ ծովի տեսարանով, մի դեպքում արժե 1578 դոլար, մյուս դեպքում՝ 1617: Այս արժեքները եւս փոփոխական են՝ կախված հավելյալ տրամադրվող ծառայություններից:

OneWay տուրը Ամանորը Շարմ էլ Շեյխում նշելու համար դեկտեմբերի 30-ից հունվարի 6-ի համար առաջարկում է 406.000 դրամանոց փաթեթ՝ 1 անձի համար, որը ներառում է 4 աստղ գնահատվող հյուրանոց՝ All inclusive սննդակարգով, ամանորյա ընթրիքով, դիմավորում/ճանապարհումով: Թե ինչ առաջարկներ են գործում այլ երկրների ու քաղաքների դեպքում, «Ժողովուրդ» օրաթերթը կներկայացնի հաջորդիվ:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՍԱՀՄԱՆՎԵՑ

ԳՈՄԱՂԲԸ՝ ՀՐԱՏԱՊ ԽՆԴԻՐ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Կառավարությունը դեկտեմբերի 7-ի նիստում սահմանեց ՀՀ-ում գոմաղբի, թռչնաղբի պահեստավորմանը, տեղափոխմանը, վերամշակմանը, օգտագործմանը եւ վարակազերծմանը ներկայացվող պահանջները:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ ներկայումս բնապահպանական ամենահրատապ խնդիրներից մեկը գոմաղբի, թռչնաղբի պահեստավորումը, տեղափոխումը, վերամշակումը եւ վարակազերծումն է: Հաճախ գոմաղբը, թռչնաղբը չի տեղափոխվում հատուկ վայրեր, այլ հեռացվում է գյուղացիական տնտեսությունների անմիջական հարեւանությամբ: Աստիճանաբար գոմաղբի հեռացման վայրերում հողը սկսում է օքսիդանալ եւ դառնում ոչ պիտանի գյուղատնտեսության մեջ երկարաժամկետ օգտագործման համար: Ժամանակի ընթացքում ստորերկրյա ջրերը եւ մթնոլորտը ենթարկվում են աղտոտման, որի մեջ արտանետվում են ջերմոցային գազերի՝ մեթանի արտանետումները: Յուրաքանչյուր օր ցանկացած անասնապահական ֆերմայում կուտակվում է մեծ քանակությամբ կենդանական արտաթորանք՝ գոմաղբ, թռչնաղբ, որը հիանալի պարարտանյութ է մշակաբույսերի համար, բայց առանց պահեստավորման եւ վերամշակման այն վնասակար է մի շարք պատճառներով. դրանք պարունակում են վնասակար բակտերիաներ, ճիճուների ձվեր (հելմինտներ), միջատների թրթուրներ եւ տարբեր մոլախոտերի սերմեր:

Գոմաղբի, թռչնաղբի քայքայման ժամանակ առաջացած գազերը վնասում են բույսերի արմատներին: Դրանցում տեղի ունեցող քիմիական ռեակցիաները եւ ավելորդ ջերմության առաջացումը նույնպես անբարենպաստ է, որն էլ հողի է բույսերի հիվանդություններով, բերքատվության նվազմամբ եւ նույնիսկ ամբողջ բերքի ոչնչացմամբ: Գոմաղբի, թռչնաղբի ոչ պատշաճ պահպանումը, վերամշակումը կարող են հանգեցնել աղետալի հետեւանքների, ինչի արդյունքում հողերը, ստորերկրյա ջրերը, օդը եւ մոտակա ջրային մարմինները աղտոտվում եւ թունավորվում են նիտրատներով եւ մանրէներով: Միաժամանակ գոմաղբի պահպանման պայմանների խախտումները կարող են նպաստել վարակիչ հիվանդությունների տարածմանը:

Գոմաղբը, թռչնաղբը միլիոնավոր տոննա ջերմոցային գազերի արտանետման աղբյուր է, այն աղտոտում է ջրային մարմինները, ստորերկրյա ջրերը եւ հողը, իսկ դրա պաթոգեն միկրոֆլորան վտանգավոր հիվանդությունների պատճառ է հանդիսանում: Այս նախագծով առաջարկվում է սահմանել գոմաղբի պահպանման, տեղափոխման, վերամշակման եւ վարակազերծման պահանջները, ինչը ուղղված է մարդու կյանքի եւ առողջությանը, կենդանիների, ինչպես նաեւ շրջակա միջավայրի պաշտպանությանը:

Հավելենք, որ միաժամանակ նախագծի ընդունմամբ խոշոր տնտեսվարողներին, մասնավորապես՝ թռչնաֆաբրիկաներին հնարավորություն կընձեռնվի թռչնաղբից ստանալ օրգանական պարարտանյութ:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 15 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 21-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԿԱՐԵՎՈՐ

ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Արթուր Հովհաննիսյանը 2018 թվականի իր հայտարարագրում որպես սեփական տրանսպորտային միջոց հայտարարագրել է Nissan X-Trail մակնիշի մեքենա, որը ձեռք է բերել 2008 թվականին: 2022 թվականի տարեկան հայտարարագրում նա նշել է 2013 թվականի արտադրության Ford մակնիշի մեքենա, որը ձեռք է բերել 2022 թվականին:

ՔՊ-ական պատգամավոր Վիլեն Գաբրիելյանը հեղափոխությունից հետո մեքենա ձեռք չի բերել, իսկ 2006-2007 թվականներին ձեռք բերված IZH բեռնատարը եւ Mitsubishi մակնիշի մեքենան չի օտարել:

Պատգամավոր Լենա Նազարյանը մեքենա չունի, սակայն պատգամավոր ամուսինը՝ Նարեկ Բաբայանը, 2021 թվականին ձեռք է բերել Toyota մակնիշի մեքենա, իսկ հեղափոխությունից առաջ նա մեքենա չի ունեցել:

ՔՊ-ական Հայկ Սարգսյանը հայտարարագրել է 2 մեքենա՝ 2017 թվականին ձեռք բերված՝ 2005 թվականի արտադրության Mercedes-Benz մակնիշի, մյուսը 2019 թվականին ձեռք բերած՝ 2013 թվականի արտադրության Lexus մակնիշի մեքենա:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԸ

Երեւան համայնքում ավտոկայանատեղիների 2023թ. վճարները սահմանվել են Երեւանի ավագանու 2022թ. դեկտեմբերի 27-ի թիվ 687-Ն որոշմամբ եւ գործելու են մինչեւ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը՝ ժամը 24:00-ն: «Ժողովուրդ» օրաթերթին այս մասին տեղեկացրին Երեւանի քաղաքապետարանից:

«Հետեւաբար 2023թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում կատարված տարեկան 12 000 դրամ վճարը տարածվելու է միայն 2023թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում կայանման վրա:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ 2024 թվականի ավտոկայանատեղիների դրույքաչափերը կսահմանվեն Երեւանի ավագանու՝ 2023 թվականի դեկտեմբերի 26-ին կայանալիք հերթական նիստի ընթացքում»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Երեւան քաղաքի Փոքր կենտրոնի բեռնաթափմանը միտված աշխատանքների շրջանակում նախատեսվում է նոր մոտեցում կիրառել վճարովի ավտոկայանատեղիների համակարգում:

Հիշեցնենք, որ Երեւանի քաղաքապետարանը մտադիր է կտրուկ բարձրացնել ավտոմեքենաների կայանման վճարը: 2024 թվականի հունվարի 1-ից մայրաքաղաքի կենտրոնում՝ կարմիր գծերում մեքենա կայանելու գինը կաճի 13 անգամ՝ տարեկան 12,000 դրամի փոխարեն՝ 160,000 դրամ:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ԲՆԱԿԱՐԱՆ ԵՆ ՍՏԱՑԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ կառավարությունն ընդունել է «Բնակելի տարածքներ նվիրելու մասին» որոշում, որով առաջարկվում է վթարային շենքերում բնակվող թվով 38 ընտանիքների նոր շենքում հատկացնել բնակարաններ: 5 բնակարաններն առաջարկվում է տրամադրել 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետեւանքով Աղարան քաղաքում բնակելի տունը քանդված (կամ քանդման ենթակա) եւ նախկինում բնակարան չստացած ընտանիքներին ու արցախյան 44-օրյա պատերազմում զոհվածների ընտանիքներին: Արագածոտնի մարզի Աղարան քաղաքի Բաղրամյան N 43 եւ Գարեգին Նժդեհի N 7 հասցեներում գտնվող վթարային շենքերում բնակվում են թվով 38 ընտանիքներ: Նշված ընտանիքների բնակարանային ապահովման հարցը լուծելու համար Աղարան քաղաքի Գարեգին Նժդեհի N 36 հասցեում կառուցվել է նոր՝ թվով 43 բնակարան ունեցող բազմաբնակարան շենք:

Ինչպես նշել է ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը, շենքի կառուցումն ավարտված է, շենքը հանձնված է Պետական գույքի կոմիտեի տնօրինությանը: Ըստ նախարարի՝ պետական միջոցները կազմել են շուրջ 682 միլիոն դրամ: Նախկին 2 շենքերը 38 բնակարան ունեին, այս պարագայում բնակարանների թիվը 43 է: Մակերեսային համեմատությամբ նախկին 2 շենքերի ընդհանուր մակերեսը 1800 քմ էր, նորինը՝ 2700, ինչը նշանակում է, որ գրեթե բոլոր սեփականատերերն իրենց նախկին բնակմակերեսից ավելի մեծ բնակմակերեսով բնակարաններ կստանան: «Եթե նախկինում բնակիչը 2 սենյակ ուներ, հիմա եւս երկու սենյակ կունենա, ուղղակի՝ մակերեսները մեծ: Հաշվի են առնվել նաեւ հաշմանդամություն ունեցողների կարիքները: Այս որոշման արդյունքում 43 ընտանիքի 118 անձի բնակարան կնվիրենք»,- ասել է նախարարը:

Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանն էլ նշել է, որ շահագործման կիանձնվի մեկ սենյականոց 16 բնակարան, երկու սենյականոց 14 բնակարան, երեք սենյականոց 12, չորս սենյականոց 1 բնակարան:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ թեմայի համատեքստում Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է վթարային շենքերը լիկվիդացնելու հետ կապված խնդիրներին. «Գիտեմ օրինակներ, երբ վթարային շենքի դիմաց մարդիկ բնակարան են սարքել, եւ ընտանիքի մի մասը մնացել է հին շենքում, մյուս մասը տեղափոխվել է նոր բնակարան, եւ պրոբլեմը մեզ համար մնացել է նույնը: Եվ մենք ահուդողով սպասում ենք, ասում ենք՝ բա որ մի բան եղավ, շենքը փլուզվեց եւ այլն: Հիմա երաշխավորե՞լ ենք, որ նոր բնակարանները բաշխելուց հետո հին բնակարաններում ոչ մի մարդ չի մնալու: Ընդ որում՝ սա պետք է արագ կազմակերպել եւ ժամանակացույցով, հստակ վթարային շենքը հողին հավասարեցնել»:

ՏԿԵ նախարարի խոսքով՝ նոր բնակարանի սեփականությունը վթարային շենքի բնակիչները ստանալու են, երբ հրաժարվեն հին բնակարանի սեփականությունից: Ըստ նախարարի՝ գործընթացն ավարտելուց հետո՝ երկու ամսում, Ապարանում շենքերը կքանդվեն: Վարչապետը հանձնարարել է տրամադրել կոնկրետ ժամկետներ՝ վթարային երկու շենքերը քանդելու վերաբերյալ:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԻՓՈԹԵՔՆԵՐԸ

Կառավարությունը դեկտեմբերի 7-ի նիստում որոշեց 760 մլն դրամ լրացուցիչ ֆինանսական միջոցներ հատկացնել զինծառայողների հիփոթեքային վարկավորման օժանդակելուն ուղղված ծրագրի ապահովման համար:

Հարցը ներկայացրեց պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը՝ նշելով. «Այս նախագծով հատկացնում ենք 2.5 մլն դրամ՝ նախկին վարկի 10 տոկոսի փոխարեն, որի միջինացված արժեքը կազմում էր 2 մլն 238 հազար դրամ, իսկ վարկի տոկոսադրույքը 5 տոկոս՝ նախկին 3 տոկոսի փոխարեն: Բացի այդ, պետք է նշել, որ 2022-2023 թվականներին հնարավորություն է տրվել հիփոթեքային վարկով բնակարաններ ձեռք բերելու ծրագրից օգտվել հայտ ներկայացրած բոլոր զինծառայողներին, որը գերազանցել է գործող ծրագիրը:

Հիշեցնեմ, որ, կառավարության որոշմամբ, սահմանված է տարեկան 500 զինծառայողի նման հնարավարություն տալ, բայց այս տարի հայտ ներկայացրած 1111 զինծառայողների այդ հնարավորությունը տվել ենք»:

Նշենք, որ հիփոթեքային վարկավորման 2023թ. ծրագրին մասնակցած 1111 զինծառայողից նոյեմբերի 9-ի դրությամբ տեղեկանք է հատկացվել 933 զինծառայողի, իսկ տասը ամիսների պետական աջակցությունը կազմել է 1.744.550,0 հազար դրամ, կանխավճար է հատկացվել 389 շահառուի, իսկ 993-ին՝ սուբսիդավորում (3%, 5%): Հիփոթեքային վարկի մայր գումարի չմարված 10-ից 100 տոկոս մարման ենթակա գումար հատկացվել է 59 շահառուի:

2023թ. ընթացքում 500 բնակարանի (բնակելի տան) ձեռք բերման դեպքում անհրաժեշտ բյուջետային միջոցների պահանջարկը (սպասողական ցուցանիշներ) կարող է կազմել 2.216.811,0 հազար դրամ:

Որոշման նախագծով առաջարկվում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացնել նախատեսվող ծախսերի ֆինանսավորումը 2023թ. հաստատված նախահաշիվների եւ կնքված պայմանագրերի գների տարբերության հետեւանքով առաջացած ազատ ֆինանսական միջոցների հաշվին:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Արթուր Լենդրուշի Դավթյանին պատկանող՝ ստորեւ նշված անշարժ գույքը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

Արթուր Լենդրուշի Դավթյանի սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 09.01.2024 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ԵԴ/0822/04/18 սնանկության գործով 29.04.2019 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված Արթուր Լենդրուշի Դավթյանի ստորեւ նշված անշարժ գույքի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտով.

Լոտ 1 - Պարտապանի պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Արթուր Լենդրուշի Դավթյանին (4/15), Անժելիկ Սմբատի Պետրոսյանին (4/15), Գայանե Լենդրուշի Դավթյանին (4/15) ու Դավիթ Վարդանի Հեքիմյանին (1/5) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող եւ Ռոբերտ Էդմոնի Սմբատյանի օգտին գրավադրված ՀՀ, ք. Երեւան, Աջափնյակ, Լենինգրադյան փողոց 32 շենք բնակարան 1 հասցեում գտնվող անշարժ գույքը, (մակերեսը՝ 70,3քմ, հարկայնությունը՝ 4/1) սեփականության իրավունքի վկայական՝ 14102014-01-0158, կադաստրային ծածկագիր՝ 01-001-0024-0079-001-001:

Մ Մեկնարկային գին՝ 31,800,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման Արթուր Լենդրուշի Դավթյանի սնանկության գործով թիվ 2471202677420000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս քան երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (էլ. Փոստ՝ makar@bankruptcy.am)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԵԴԱԼՆԵՐ

ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ ԵՆ ՌԵԿՈՐԴԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ կառավարության դեկտեմբերի 7-ի հերթական նիստում Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյան, ներկայացնելով «ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի ոլորտների 2024-2030 թվականների զարգացման ռազմավարությունը եւ ռազմավարական գործողությունների ոլլանը հաստատելու մասին» նախագիծը, նշեց, որ այս տարի Հայաստանի մարզիկներն աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում նվաճել են 432 մեդալ, որը շուրջ 40 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը: 2022 թվականին Հայաստանը ներկայացնող մարզիկները 307 մեդալ էին նվաճել, ինչն այդ ժամանակ ռեկորդային ցուցանիշ էր:

Նրա խոսքով՝ սպորտի զարգացումը եւ հանրության շրջանում առողջ ֆիզիկական ակտիվության խրախուսումը ՀՀ կառավարության ծրագրի կարեւոր առաջնահերթություններից է, եւ մարզիկների նվաճումներն այդ շարունակական քաղաքականության արդյունք են:

Ըստ նախարարի՝ ոլորտում առանձին խնդիր է հաշվետվողականությունը:

«Այդ թվում օրենսդրական փոփոխությունների միջոցով վերանայվելու եւ հստակեցվելու են լիազոր մարմնի, ֆեդերացիաների, Օլիմպիական կոմիտեի եւ մարզական կազմակերպությունների հարաբերությունները: Ներդրվելու է տեղեկատվական կառավարման համակարգ, աշխատանք է տարվելու մասնավոր ոլորտի ներգրավվածության մեծացման մասով, այդ թվում՝ կառավարման գործընթացները պատվիրակելու միջոցով: Կմշակվեն առանձին մարզաձեւերի զարգացման ծրագրեր, ինչպես ֆուտբոլը, շախմատը, բասկետբոլը, ձմեռային մարզաձեւերը»,-հավելել է Անդրեասյանը՝ նշելով, որ ռազմավարության կարեւոր ուղղություններից է ոլորտում կարողությունների զարգացումը մարզիչների եւ մրցավարների որակավորման աստիճանական ստանդարտների ներդրման, արդի պահանջներին համապատասխան վերապատրաստումների համակարգի ներդրման եւ այլ ուղղություններով:

«Շարունակելու են գործել նվաճումներ ունեցող մարզիկների եւ նրանց մարզիչների խրախուսման գործիքները, որը թե՛ միանվագ, թե՛ ամսական իմաստով շոշափելի դրամական աջակցություն է: Կան ամսական նույնիսկ մեկ միլիոն դրամից ավելի դրամական խրախուսում ստացող մարզիկներ»,-ընդգծել է գերատեսչության ղեկավարը՝ կարեւորելով մարզիչների աշխատավարձերի բարձրացման քաղաքականությունը կամավոր ատեստավորման ներդրման միջոցով:

«Այս տարի իրականացվել է 4 մարզաձեւի համար, սակայն եկող տարի կընդլայնվի՝ ընդգրկելով մեծ թվով մարզաձեւեր»,-հայտնել է նախարարը:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ԲԱՎԱՐԻԱ»-Ի ԱՌԱՋԱՐԿԸ

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիան» Մադրիդի «Ռեալին» առաջարկել է ֆուտբոլիստների փոխանակություն. հաղորդում է Defensa Central-ը: Արքայական ակումբը ցանկանում է հաջորդ ամռանը ձեռք բերել մյունխենյան թիմի կանադացի պաշտպան Ալֆոնսո Դեւիսին: «Բավարիան» առաջարկել է նրան փոխանակել «Ռեալի» բրազիլացի հարձակողական կիսապաշտպան Ռոդրիգոյի հետ: Մյուս տարբերակը Դեւիսի փոխանակությունն է «Ռեալի» հեռանկարային կիսապաշտպան, 19-ամյա արգենտինացի Նիկո Պասի հետ, սակայն այս դեպքում մադրիդյան ակումբը պետք է նաեւ լրացուցիչ գումար վճարի: 22-ամյա Ռոդրիգոն «Ռեալի» խաղացող է 2019 թվականից: Նրա պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2028թ. հունիս: Ընթացիկ մրցաշրջանում Ռոդրիգոն իտալացի Կառլո Անչելոտիի գլխավորած թիմի հետ մասնակցել է 20 հանդիպման, խփել է 9 գոլ, կատարել 5 գոլային փոխանցում: Transfermarkt-ը Ռոդրիգոյի տրանսֆերային արժեքը գնահատում է 100 միլիոն եվրո, Ալֆոնսո Դեւիսինը՝ 70 միլիոն եվրո, Նիկո Պասինը՝5 միլիոն եվրո:

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ԵՐԿԱՐԱՁԳԵԼ

Նիդերլանդների հավաքականի եւ իտալական «Ինտերի» 27-ամյա պաշտպան Դենզել Դյումֆրիսը հրաժարվել է երկարաձգել պայմանագիրը միլանյան ակումբի հետ. հաղորդում է իտալական La Gazetta dello Sport-ը: «Ինտերը» ֆուտբոլիստին առաջարկել է տարեկան 4 միլիոն եվրո աշխատավարձ: Դյումֆրիսի ներկայացուցիչները պահանջել են առնվազն 5 միլիոն եվրո: Եթե կողմերը չհասնեն համաձայնության, «Ինտերը» հաջորդ ամռանը կվաճառի Դյումֆրիսի տրանսֆերը: Նրա պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2025թ. հունիս: Դյումֆրիսն «Ինտերում» հանդես է գալիս 2021 թվականից: Ընթացիկ մրցաշրջանում նա իտալացի Սիմոնե Ինձագիի գլխավորած թիմի հետ մասնակցել է 16 հանդիպման, խփել է 2 գոլ, կատարել 4 գոլային փոխանցում: Transfermarkt-ը Դյումֆրիսի տրանսֆերային արժեքը գնահատում է 28 միլիոն եվրո:

ԴՈՆԱՐՈՒՄԱՆ ՈՐԱԿԱՋՐԿՎԵԼ Է

Փարիզի ՊՍԺ-ի իտալացի դարպասապահ Ջանլուիջի Դոնարումման որակազրկվել է Ֆրանսիայի առաջնության երկու խաղով. հաղորդում է ակումբի մամուլի ծառայությունը: Ֆրանսիայի առաջնության 14-րդ տուրում «Հավրի» դեմ հանդիպման 10-րդ րոպեին Դոնարումման հեռացվել էր վերջին հույսի խախտման համար, որի ժամանակ ոտքով հարվածել էր մրցակցի կրծքավանդակին: ՊՍԺ-ն հաղթել էր 2:0 հաշվով: 24-ամյա դարպասապահը չի օգնի իսպանացի Լուիս Էնրիկեի գլխավորած թիմին «Նանտի» (դեկտեմբերի 9) եւ «Լիլի» (դեկտեմբերի 17) դեմ հանդիպումներում: Ընթացիկ մրցաշրջանում Դոնարումման ՊՍԺ-ի հետ բոլոր մրցաշարերում մասնակցել է 19 հանդիպման, բաց է թողել 18 գոլ: Նրա պայմանագիրը ՊՍԺ-ի հետ նախատեսված է մինչեւ 2026թ. հունիս:

Transfermarkt-ը Դոնարումայի տրանսֆերային արժեքը գնահատում է 45 միլիոն եվրո:

ԱՐՑԱԽ

ՉԵՎԱԿԵՐՊԵԼ Է ՊԱՅՔԱՐԻ ԻՐ ԲԱՆԱՁԵՎԸ

«Արցախիս հանդեպ անսահման կարոտը՝ իմ սրտում, ուզում եմ Արցախի պատանիկները դարձնել հավերժ ներկա»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է Արցախից բռնի տեղահանված Լիլիթ Հայրապետյանը:

Լիլիթը մասնագիտությամբ բանասեր է: Սովորել է Արցախի պետական համալսարանում: Ինչպես Լիլիթն է ասում, նրան միշտ ավելի հոգեհարազատ է եղել դերասանի մասնագիտությունը: Փոքր տարիքից քրոջ՝ Վարդինեի հետ ներկայանում էր բեմերում տարբեր կերպարներով: 2020 թվականից հետո արդեն աշխատում էր Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնում՝ որպես սկսնակ դերասանուհի, եւ հենց այդ ժամանակ էլ նկարահանվեց մեր քաջորդիների սխրագործությունները պատկերող «Արցախի լուսաբացը» կինոներկայացմանը:

Հիմա Լիլիթը ապրում է Երեւանում, բայց բեմ բարձրանալու ցանկություն չունի: Որոշել է Արցախը ներկայացնել էկոպայուսակների տեսքով:

«Ես Լիլիթ Հայրապետյանն եմ՝ արցախցի երիտասարդներից մեկը, որը փորձում է իր ունեցած տաղանդով, հնարավորություններով աշխարհին ներկայացնել ու հասանելի դարձնել Արցախն ու նրա մշակութային արժեքները: Բեմ բարձրանալու դեռ պատրաստ չեմ: Ընկճված եմ, բայց ոչ թեւաթափ: Որոշել եմ Արցախս ներկայացնել աշխարհին ազգային այլ արժեքների տեսքով: Այսուհետ իմ հնարավորությունները կիրառելու եմ էկոպայուսակների արտադրության մեջ»,- ասում է մեր զրուցակիցը:

Լիլիթի խոսքով՝ շրջափակումը չընկճեց արցախցուն, ավելին՝ յուրաքանչյուրն ունեցավ պայքարի իր բանաձեւն ու ամուր էր կանգնած հայրենի հողի վրա՝ գիտակցելով, թե ինչպես եւ երբ է հողը դառնում հայրենիք:

«Իմ բանաձեւը ես ձեւակերպել էի հետեւալ կերպ՝ սիրելիիս հետ հաղթահարել բլոկադայի հետեւանքով ստեղծված սոցիալ-հոգեբանական գործոնները, ամուսնանալ ու շարունակել Արցախցու հզոր տեսակը... Ամուսնացա հուլիսի 23-ին, իսկ հետո... հետո եղավ այն, ինչ բոլորս գիտենք»,- հուզմունքով ասում է Լիլիթը:

● *Դեկտեմբերի 9-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Շերշե լա ֆամ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղի բնակիչներին նույնականացման քարտ չի տրամադրվում:

Անահիտ Թորոսյան (52 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Լեռնային Ղարաբաղի այն բնակիչները, որոնք ունեն վավեր նույնականացման քարտ, կարող են օգտագործել փաստաթուղթը մինչեւ դրա ժամկետի ավարտը:

ՀՀ կառավարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Լեռնային Ղարաբաղի՝ ՀՀ քաղաքացիություն ստացած բնակիչները կարող են դիմել նույնականացման քարտ ձեռք բերելու համար՝ համաձայն նույնականացման քարտերի մասին ՀՀ օրենքի հոդված 2-ի:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

ՀԱՐՑ. «ՀայՓոստ»-ով առաքումներ անելիս ո՞ր դեպքում է սահմանվում մաքսատուրք:

Լուսինե Բաղալյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. 2022 թվականի մարտի 31-ից սկսած՝ ոչ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից ֆիզիկական անձանց կողմից փոխադրողի միջոցով կամ միջազգային փոստային առաքումներով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար մաքսատուրք եւ հարկեր չեն գանձվում, եթե տեղափոխվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 30 կիլոգրամը, իսկ արժեքը չի գերազանցում 200 հազար ՀՀ դրամը:

ՀայՓոստ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե ընդհանուր քաշը գերազանցում է 30 կիլոգրամը, կամ արժեքը գերազանցում է 200 հազար ՀՀ դրամը, ապա սահմանվում է մաքսատուրք եւ հարկեր գերազանցող մասի համար 15% միասնական դրույքաչափ, սակայն ոչ պակաս, քան 30 կիլոգրամը գերազանցող յուրաքանչյուր կիլոգրամի համար 2 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Չինաստանում սկսել են շահագործել աշխարհում ամենամեծ ստորգետնյա լաբորատորիան, որը գտնվում է 2400 մ խորության վրա: Լաբորատորիան գտնվում է երկրի հարավ-արեւմտյան Սիչուան նահանգում: Այն ունի 330.000 խորանարդ մետր տարածք:

DURF լաբորատորիան սկսել են կառուցել 2020թ. դեկտեմբերից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	0 - 2 +5 + 8
Կոտայքի լեռներ	-1 + 2 +5 + 6
Կոտայքի նախալեռներ	+2 + 4 +9 + 11
Գեղարքունիք	0 + 4 +3 + 6
Լոռի	-1 + 3 +10 + 13
Տավուշ	+2 + 5 +12 + 15
Արագածոտնի լեռներ	-1 - 5 +8 + 11
Արագածոտնի նախալեռներ	-1 - 5 +8 + 10

Մարզ	Ջերմաստիճան
Արարատ	+3 + 6 +9 + 11
Արմավիր	0 + 2 +5 + 8
Վայոց ձորի լեռներ	0 + 2 +5 + 8
Վայոց ձորի նախալեռներ	+3 +6 +9 + 11
Սյունիքի հովիտներ	+5 +9 +13 + 16
Սյունիքի նախալեռներ	+5 + 9 +10 + 13
ԼՂՀ	+2 + 5 +10 + 13
Երեւան	+3 + 5 +8 + 10

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.12.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*